


Գ

Մ

Բ

ՈՒ

Ե



ISSN 0220-3052

4

2001

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ

ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԳԼԻԱԳԻՐ ՆՈՐԱԳՈՅՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

86 տարի է անցել արդեն, բայց հայ ժողովրդի դեմ կատարուած ոճիրը՝ Ցեղասպանութիւնը, դեռ շարունակում է արծագանքել հայոց գրականութեան մէջ: Արծագանք, որ իր մէջ պարունակում է հայ գրող ու բանաստեղծ սերունդների և նրանց միջոցով արտայայտուած, գեղարուեստական շունչ ստացած, հայ մարդու անվերջանալի փնտրտուքը՝ ըմբռնելու աղետը, հաշտութեան եզր գտնելու աղետեալի, զոհի, հայրենակորոյսի իր իրավիճակի հետ, կամ վեր յառնելու, ընդվզելու թուրքի ուրացումի դեմ, պայքարելու և իր մարդկային ու ազգային իրաւունքները պահանջելու:

Սփիւռքի յետ-եղեռնեա գրականութիւնը, այսպէս կամ այնպէս, առնչուած է Ցեղասպանութեան հետ: Սփիւռքը արդիւնքն է Ցեղասպանութեան:

*Կոտորածի զաւակներ,
աւերի զաւակներ,
սփռումի զաւակներ,
օ՛հ իմ Սփիւռք...*

Ահա Դայանա Տեր-Յովհաննիսեանի բանաստեղծական պատկերը Սփիւռքի, որի իմաստային կիզակետում՝ ցեղասպանութիւնը: Բայց Ցեղասպանութիւնը Սփիւռքի ֆիզիկական գոյութեան սկզբնաղբիւրը չէ միայն: Մի Վերջ է ու Սկիզբ:

Այսօր, նոր հազարամեակի սեմին, երբ եղեռնը այլևս անցեալ դարում կատարուած դէպք է սեպուած, երբ յուշերը խանրում են և սերունդները աւելի ու աւելի են հեռանում, ցաւոտ անցեալի նկատմամբ անտարբեր դառնում, կամ հայոց գրականութեան ու պատմութեան ընդմիջից արտացոլող զոհի կերպարը այլևս տաղտկութիւն ու ընդվզում է պատճառում նրանց, Ցեղասպանութեան գրականութեան շարունակման համար տեղիք կա՞յ արդեօք: Իսկ եթէ կան

դեռևս ներգործիչ ազդակներ՝ այդ շարունակութիւնը ապահովող, ի՞նչ ուղղութիւն կրճնի Ցեղասպանութեան գրականութիւնը:

Հայոց ցեղասպանութիւնը հսկա գրականութիւն է առթել, արծակ և բանաստեղծութիւն: Այնուամենայնիւ, հայ գրողներն ու գրաքննադատները զուր են սպասել ու ձգտել վէպերի վէպին, որ պիտի պարագրկի Հայոց ցեղասպանութիւնը իր ամբողջութեան մէջ: Դա չի իրականացել: Փաստն այն է, որ «Մուսա Լեւան քառասուն օրը» (1933) այս ժանրի ամենից յաջողած վէպը, ոչ-հայի ձեռքով է գրուած. իսկ հիմա, աւելի յաջող մի գործ՝ 1989-ին գերմաներէնով և 1990-ին անգլերէնով ու յետոյ էլ ֆրանսերէնով լոյս տեսած և Ալֆրեդ Դոբլինի անվան գրական մրցանակին արժանացած, Էդգար Հիլզընրաթի «Վերջին մտածումի պատմութիւնը» (The Story of the Last Thought) գիրքն է: Այս երկուսի կողքին չեն կարող մատնանշել հայ հեղինակի մի գործ որևէ ժանրում, որ այդքան յաջողութեամբ ներկայացնի Հայոց ցեղասպանութեան գեղարուեստական մարմնաւորումը: Գուցէ Պարոյր Սեակի «Անլռելի զանգակատունը»՝ որոշ չափով: Պարսկահայ-ամերիկահայ գրող Լեոնարդօ Ալիշանը գրում է. «Յարմար գրական սեռ գոյութիւն չունի, որով կարելի լինի գեղարուեստական արտայայտութիւն տալ Ցեղասպանութեանը: Վէպը որոշ չափով մօտենում է, բայց դա էլ բաւական չէ: Մասնաւորը վկայագրում է ընդհանրութիւն և, նրանով հանդերձ, որ այս մասնաւորը ճշմարտութիւնն է արտայայտում, բայց ճշմարտութեան ամբողջութիւնը արտայայտել ու ձախողւում է»: Դա կլինի պատկերը միայն, ըստ Պլատոնի՝ «տեսքը», նմանակութիւնը, որ առնվազն մեկ աստիճան հեռու է իդէալից, իրողութիւնից՝ որ ճշմարտութիւնն է, աներևակայելի ճշմարտութիւնը ցեղասպանութիւն կոչուած ոճրի:

Հայոց ցեղասպանութիւնը ապրած սերունդը չկարողա-

ցաւ ստեղծել սպասուած գլուխգործոցը: Ամենից տաղանդաւորները կոտորուեցին հենց սկզբում: Փոքրաթիւ ազատուածները՝ Յակոբ Օշական, Արամ Անտոնեան, Սուրեն Պարթեան, հակառակ թափած ջանքերին, չյաջողեցին: Ուրեմն տրամաբանական չէ սպասել յաջող սերունդներից կամ ապագա սերնդից, որ այդ գազաթնակէտին հասնեն: Այնուամենայնիւ, հաւատում եմ, որ զաւիթ սերնդի հայ գրողները, ոմանք դեռ անցեալի ցաւով տարուած, ոմանք մեծ-հօր կամ մեծ-մօր տառապանքի ճամբով ահռելի իրողութեան հետ մոր առնչուած, ուրիշներն էլ Տեղասպանութեան թնայով զբաղուելու ազատութիւնը մոր գտած, - կունենան այդ կարողականութիւնը: Ժամանակի հեռաւորութիւնը որպէս առաւելութիւն ունենալով, բրտութեան պոետիկայի ըմբռնողութեան տաղանդով օժտուած ու պատմութեան խորը գիտակցութեամբ, պիտի կարողանան առճակատել Տեղասպանութեանը: Նրանց գործը կը ցուցնի ցեղի հաւաքական հոգեբանութիւնը, որի խորքում՝ մի ամբողջ աշխարհի բռնարարքներով, սփռման ցաւով, ինքնամբաստանութեամբ, ինքնութեան փնտրտութի կամ ինքնութեան երկուութեան հետ հաշտութեան եզր գտնելու ճիգերով, ու վերջապէս, յօրագործների ուրացման և աշխարհի անտարբերութեան դէմ ընդվզումով հագեցուած:

Բայց մի վայրկեան կանգ առնենք ու մտածենք՝ ի՞նչ է Տեղասպանութեան գրականութեան գործառնությունը: Այստեղ պիտի դիմել ընկերաբաններին հաստատելու համար, որ գրականութիւնը ընկերային (սոցիալական) գիտակցութիւն ունի: Melvin J. Vincent-ը գրում է. «Վիպական արծակը կարելի է դարձնում երևակայական պեղումը մարդու ներքին աշխարհի և ընկերային երևոյթների ընդերքում: Երբ այս պեղումը մատուցում է գրական գերագոյն հմտութեամբ, արդիւնքը անենախորը պատկերացումն է և իմաստաւորումը մարդկային ու հասարակական իրողութեան»: Հայոց ցեղասպանութեան վիպականացումը հենց այդ թափանցումն է կատարում՝ հզօր ազդումի իր կարողականութեամբ, որ երկու մակարդակի վրայ է աշխատում: Ներքին մակարդակը, որ ներգործում է վերապրող սերունդների վրայ՝ իր ամոքող, վիշտը քավող յատկութեամբ: Այսպիսի ներգործումն հայի հոգում վառ է պահում իր ժողովրդի դէմ գործուած հսկա անարդարութեան գիտակցութեան այրող բոցը, որը և հիմքն է պահանջատիրութեան զգացումի:

Որքանով է գրականութիւնը հեռանում մաքուր արուեստից (pure art) և որքանով է մօտենում միտումնաւոր արուեստին (litterature engage), որ քաղաքական նպատակներ է հետապնդում: Սահմանները դիրքին են խախտուած:

Աշխարհը ի՞նչ գիտի Հայոց ցեղասպանութեան մասին:

Հայոց ցեղասպանութիւնը վերապրած առաջին սերնդի անդրադարձը Ադէտին լուծուեց էր: Աշխարհի չորս կողմերում սփռուած, գաղթական ընկած հայը, մոր ու օտար միջավայրի հետ նոյնանալու ճիգով տարուած, չուզեց խօսիլ իր հոգին կրօնող տառապանքի մասին, իր սարսափելի անցեալի մասին, դա նրան կառնածնացներ, կը տարբերէր հիւրընկալ հասարակութիւնից, որ այնքան էլ հիւրընկալ չէր և կասկածով էր նայում երկրի լեզուն չխօսող, տարօրինակ սովորութիւններով այդ օտարին: Յետոյ կար լուծեան մի այլ պատ-

ճառ՝ զաւակներին խնայել, իր հոգում վառուող դժոխքի մէջ չներքաշել նրանց: Ե՞րբ պիտի գար Հիւզընրաթը իր գլուխգործոց վէպը գրելու և վէպը պատմողի լեզուով ասելու աշխարհին. «Ես լուծեանը պատմեցի Տեղասպանութեան պատմութիւնը: Ասացի նրան, թէ որքան կարևոր է բոլորին խօսել այդ մասին. ասացի՝ ամեն մարդ պէտք է իմանայ. այլապէս, ինչպէս կարելի է ցեղասպանութիւնը կանխարգիլել ապագայում, եթէ ամեն ոք պիտի ասի, թէ ինքը ոչինչ չգիտէր այդ մասին և ոչինչ չարեց կանխարգիլելու համար, որովհետև այդպիսի մի բան երևակայել անգամ չէր կարող»:

Ոմանց համար լուծութիւնը երբեք չկոտորուեց: Նրանց մահից յետոյ միայն, թողած կցկտուր յիշատակների ճամբով զաւակները կարողացան յայտնաբերել սարսափազդու յուշերի այն հսկայ բեռը, որ ծանրացել էր ծնողների հոգու վրայ և նրանց տարօրինակ բնաւորութեան ու անբնական վարմունքի պատճառ էր դառնում: Վիրջինիա Յարութիւնեանի Orphan in Sands («Որբ աւագների մէջ», 1995) գիրքը պատմութիւնն է հեղինակի մօր, որ միայն իր կեանքի վերջին օրերին է իր հոգին բացում աղջկայ առջև: Պատմութիւնն է նաև հեղինակի, որ ամբողջ կեանքում փորձեց հասկանալ մօրը, համակերպուել նրա տարօրինակ, երբեմն վանող կեցուածքի հետ, ու մօր մահացու հիւանդութիւնը միայն նրա առջև բացեց Տեղասպանութեան սոսկալի աշխարհը, որ փչացրել էր իր և իր մօր կեանքը:

Ոմանք էլ, արգելքները յաղթահարելով, կարողացել են իրենց տառապալից յիշատակները փոխանցել, նոյնիսկ թղթին յանձնել ու հրատարակել, «որ աշխարհը իմանայ»: Դրա մէջ մեծ դեր է խաղացել Սփիւռքի քաղաքականացումը՝ Եղեռնի յիսնամեակով սկսուած, երբ ուշադրութեան կենտրոն դարձաւ Հայոց ցեղասպանութիւնը՝ ո՛չ թէ անցեալի պէս ողբի ու սուգի պարունակով, այլ պահանջատիրութեան և ճանաչման պայքարի, ու վերապրողների յուշագրութիւնները նշանակութիւն ստացան ու տարածուեցին: Եւ հետաքրքիրն այն է, որ 30-35 տարիներ յետոյ էլ դեռ շարունակում են լոյս տեսնել մոր յուշագրութիւններ: Յովհաննէս Մկրտչեանի To Armenians with Love, The Memoris of a Patriot («Հայերին» սիրով, Մի հայրենասէրի յիշատակարանը», 1996) գիրքը մէկ օրինակն է: Յովհաննէսի հայերէն ձեռագիրը նոյնութեամբ անգլերէնի է վերածուած իր զաւակի՝ Փալ (Մկրտչեան) Մարթինի կողմից: Կամ Կարապետ Խաչեռեանի An Armenian Doctor in Turkey: My Smyrna Ordeal in 1922 («Մի հայ բժիշկ Թուրքիայում, 1922-ի Զմիւռնիայի իմ չարչարանքը», 1997) գիրքը՝ իր թոռ Դորա Սաքայեանի կողմից յայտնաբերուած և անգլերէնի վերածուած:

Սրանք օրինակներ էին հօր կամ մեծ-հօր թողած ձեռագրերի ուղղակի վերարտադրման: Այլ պարագաներում, յաջորդ սերունդներն իրենց փոխանցուած հում նիւթը գեղարուեստական ձևաւորումով, վիպականացուած ստեղծագործում են իբրև իրենց արտայայտութիւն, իրենց հակազդեցութիւնը Ադէտին: Փիթըր Բալաքեանի ինքնակենսագրական վէպը՝ Black Dog of Fate («Ճակատագրի սև շունը», 1998), ամենից գեղեցիկ օրինակներից է այս ժանրի, ուր միախառնուած են անձնական յայտնագործութիւն, յիշատակներ ու պատմական փաստարկումներ: Efronia: An

Գառու. ապրիլ 2001

Armenian Love Story («Եֆրոնիա, Մի հայկական սիրային պատմություն», 1994)՝ Ստիմա Խաչատուրեանի յաջողած վիպականացումը իր կեսուր-մօր 500 էջանոց ձեռագիր յուշերի և այդ օտար հարսի հակադարձը Եղեռնին: Նոյնչափ յաջողած վեպ է Քարոլ Եդգարեանի Rise the Euphrates («Քարծրացիր, Եփրատ», 1994) գիրքը, որի մեջ կոտորածի ու տեղահանության ճամփաներով անցած առաջին սերնդի տառապալից անցեալը զօդուել է երրորդ սերնդի անհոգ կեանքի ու ամերիկեան մշակոյթի՝ նրան տուած ազատութիւնների ու հաճոյքների հետ: Որքան էլ նոյնացած տիրող մշակոյթին ու կեանքին, սերունդները դեռ կրում են սպիմեւրը անցեալի վերքի:

Անգլիագիր գրականութեան մէջ Հայոց ցեղասպանութեան այս նորագոյն արտայայտութիւնների յաջողութիւնը կարելի է վերագրել այն բանին, որ երկրորդ և երրորդ սերնդի գրողը կամ բանաստեղծը ստեղծագործում է հենց ամերիկեան մշակոյթի մէջ ընդունուած համակարգի ու աւանդութեան համաձայն, դրանց կրթամբը իւրացրած: Արփինէ Քոնիալեան-Արոնիէն գրում է՝ այդ գրողը կամ բանաստեղծը «դիմակայում է Ադէտը, ընդունում է այն, սգում է ու վեր յառնում նրանից», բայց դա դիւրին չէ, «դժուար ու տաղտկալի պարտաւորութիւն է զգացական զեղումների դէմ կանգնել և դրանք արտայայտել՝ առանց այդ զեղումներին կուլ գնալու»: Դժուար է, երբեմն՝ անկարելի: Լեոնարդօ Ալիշանը երբեք չկարողացաւ յաղթահարել աղիտալի յիշատակները, որ իր մեծ-մօրն էին և իր ծակատագիրը դարձան 9 տարեկանին: Նրա գրական ամենից հզօր ստեղծագործութիւնները իր մեծ-մօր մասին են, վկայութիւնները նրա չարչարալից կեանքի, որ երկար հոգեվարք էր իրականում: «Ես փորձեցի միայն հանդիսատեսը լինել այն տառապանքի, որ իր գազաթնակտին հասաւ 1978-ին Լոնդոնի հիւանդանոցներից մէկի մի սենեակում, ուր մեծ մայրս իր մահուան անկողնու շուրջ թուրք ծիավորներ էր տեսնում: Բայց, աւաղ, ես հանդիսատես չեմ, ես էլ դերակատարներից մէկն եմ այն թատերգութեան, որ երբեք, երբեք, երբեք իր հաւասարակշռումին չի հասնում»: Ալիշանը դեռևս տուայտում է տառապանքի այդ աշխարհում, ուր մեծ մայրը տևական ներկայութիւն է իր երագներում, իր մտածումներում: Նրա աչքերով է տեսնում, ինչպէս պարագան է երկրորդ և երրորդ սերնդի արուեստագէտների, հայոց տառապանքը, Ցեղասպանութիւնը:

Հայոց ցեղասպանութեան յիշատակները դեռ կենդանի են, թեկուզ աղօտած՝ դեռ ստեղծագործութիւններ են ներշնչում: Ու այդ յիշատակները մասնատուած պատկերներով ճնշում են առօրեայի վրայ: Փիթըր Բալաքեանի Sad Days of Light («Լոյսի տխուր օրեր», 1983) գիրքը մէկ օրինակն է այս երևոյթի՝ շփոթ անցեալի ու ներկայի պատկերների և նոյն շփոթը բանաստեղծի մտքում, երբ աշխարհը մեծ-մօր աչքերով է դիտվում:

Յստակ է, որ ներկայ գրականութեան անդրադարձը Ադէտին միանգամայն տարբերում է անցեալից:

Ցեղասպանութիւնը վերապրած սերունդը փորձեց արուեստի մէջ վերակենդանացնել այն դժոխքը, որ ինքն էր ապրել. փորձեց բնութագրել թուրք մարդասպանին, որպէս աղ-

բիւրը չարիքի. փորձեց բացատրել աղէտը, ջատագովել զինեալ ինքնապաշտպանութիւնը ու խարազանել վախկոտին, կեանքը քարշ տալու սիրոյն անընդունելի յանցանքներ գործողին. փորձեց Ադէտը մեկնաբանել իբրև մարդ-Աստուած յարաբերութեան խեղում, նոյնիսկ ժխտեց Աստծու գոյութիւնը, կամ կասկածի տակ դրեց նրա մէկ ու միակ եւութիւնը: Յակոբ Օշականը, Արամ Անտոնեանը, Շահան Նաթալին տարբեր ժանրերում ստեղծագործած լաւագոյններից էին: Անապատի որբեր կոչուած յաջորդ սերունդը պայքարեց համակերպուելու օտար երկրների նոր իրավիճակին. որբութեան ցաւը արտայայտեց, երագների աշխարհին ապաւինեց. իր դժբախտութեան համար մեղադրեց նախորդ սերնդի մտաւորականութեանը՝ իրեն սուտ արժէքներ փոխանցելու համար, աղէտը դիմագրաւելու զենքը փոխանցած չլինելու համար: Վազգէն Շուշանեանի, Շահան Շահնուրի, Շաւարշ Նարդունու և Նիկողայոս Սարաֆեանի, այսինքն՝ Փարիզի տղոց ստեղծագործութիւնները այդ կեցուածքն են մարմնաւորում: Ուրիշները, ինչպէս Արամ Հայկազ, Համաստեղ, հայրենաբաղձութեան առթած իրենց ճնշող զգացումները՝ վիպականացրած կամ աւելի ճիշտ առասպելականացրած Հին աշխարհի նկարագրութիւնների մէջ թաղեցին:

Ադէտը տակաւ առ տակաւ խոր անցեալի մէջ թաղուած ու նրա մշուշոտ յիշատակն է մնում: Բայց մեր գրականութիւնը դեռևս նոյն հարցի շուրջ է պտտւում. ինչու՞ պատահեց. ինչու՞ աշխարհը թոյլատրեց, որ պատահի. ինչու՞ այս ահագին անարդարութիւնը մեր ժողովրդի հանդէպ: Եւ պատասխանը չունենք: Արդարութիւնը չէ մատուցուած, մէկուկէս միլիոն մեր անմեղ մեռելների հոգիները հալածում են մեզ, գործ են պահանջում: Այս զգացական զեղումները մի կողմ թողած, երկու կարևոր պատճառ կայ, թէ ինչու՞ մենք դեռևս այսքան բռնուած ենք Ցեղասպանութեան յիշատակներով, ինչու՞ Ցեղասպանութիւնը այսքան կարևորութեամբ արտացոլում է սփիռքահայի մտայնութեան մէջ, արտայայտում է Սփիռքի գրականութեան մէջ:

Մէկ պատճառը թուրքի ուրացումն է և թուրք կառավարութիւնների շարունակական խտրողականքը՝ դաշնակիցներ գտնելու, իր խեղաթիւրած պատմութիւնը աշխարհի հասարակական կարծիքի մէջ տեղաւորելու: Ու թուրքերը միշտ գտնում են պատճառ ուրացումի: «Որտեղից՞ են գտնում», - հարց է տալիս Հիւզընրաթի վէպում պատմողի ստուերը՝ պատմողին: «Իրենց վախի մէջ», - պատասխանում է պատմողը: Որևէ այլ բացատրութիւն աւելի ճշմարիտ ու աւելի արտայայտիչ չէր կարող լինել:

Երկրորդ պատճառը հայրենիքի մշուշոտ պատկերն է, որ ամենաձուլուած սփիռքահայի մէջ անգամ մի տեսակ զգացում է արթնացնում, հայրենիքից զրկուածութիւն, հայրենիքին պատկանելու պահանջ, այն հայրենիքին, որ չի տեսել, բայց որին կարօտում է, երագում է, որին ձգտում է, և կապուած է նրան ինչ-որ մի տեսակ աներևոյթ պորտալարով:

Այս զգացումի առաջացման մէջ վստահօրէն ազդեցութիւն է ունեցել 1960-70-ական թուականներին Ամերիկայում տարածուած գտած, ազգային շէտաւորում ունեցող մտայնութիւնը՝ արմատներ, ազգային պատկանելութիւն, էթնիք ինքնութիւն փնտռելու. իսկ այս զգացումները ամերիկացուն

միացնում էին անցեալի պատմութեանը և նոյն պատմութիւնը ունեցող ազգային խմբաւորման անդամներին: Յայտնացեալը, պարզ է, կապուած էր կոտորածներին, տեղահանութեան, ողջ ընտանիքի կորստին, հայրենիքի կորստին: Ուրեմն Ցեղասպանութեան նոր հակադարձը ձևաւորուած է նայելով յետ՝ ինքնաճանաչման, ինքնագիտակցութեան և ազգային ինքնութեան այդ պատմական աղբիւրին: Փիթըր Նաշարեանի *Voyages* («Ճամբորդութիւններ», 1971) և *Daughters of Memory* («Յուշերի դուստրեր», 1986) վեպերը, կոտորածներին կատարուած յաճախակի յղումներով, անցեալի ու ներկայի բախման տխուր հետևանքներն են վկայակոչում: Նկարագրում են ազգային ինքնութեան ու որդեգրած նոր հայրենիքի պարտադրանքների իրարամերձ պայքարի մէջ բռնուած սերունդների տառապանքը: Ցեղասպանութիւնն է սկզբնաղբիւրը, և կարևոր չէ, թէ դու ընտանիք ես կորցրել անապատում, կամ բոլորովին էլ կապ չունես կոտորածներին, Դայանա Տէր-Յովհաննիսեանը քեզ «Դեր Ջորի գաւակ» է անուանում:

Սփիւռքահայ նոր սերունդների համար կոտորածների ցաւոտ ու հայրենակորոյսի զրկանքները նրանց փոխանցուած ազգային ականդութեան մաս են կազմել, և թէ սերունդները որքանով են պահել այդ ականդութիւնը, կապուած է եղել այն իրողութեան, թէ նրանք արդեօք սիրել ու պահպանե՞լ են այն, թէ՞ ատել են ու փորձել են խոյս տալ, ազատուել նրանից: Բոլոր դէպքերում, հակադարձը եղել է ճակատում ցեղասպանութեան հետ՝ գտնելու համար նրա թողած ազդեցութիւնը պատմութեան վրայ ու հայ ժողովրդի հաւաքական հոգեբանութեան վրայ: Հակադարձը եղել է նաև պրպտում իրականութեան, իսկ այդ իրականութիւնը կարող է ամբողջովին մտացածին լինել, այնպես, ինչպէս Էդգար Յիլզընրաթն է ստեղծում:

Նոյնչափ ազդեցիկ, գուցէ և ակելի, քան Ֆրանս Վերֆելի «Մուսա լերան քառասուն օրը», «Վերջին մտածումի պատմութիւնը» վեպում, ցրուած ու տարտղնուած յուշերի թեկորներն իրար մօտ բերելով, լքուած ու մոռացուած ականդութիւններ ու սովորութիւններ ի մի հաւաքելով, հեղինակը Թովմա Խատիսեանի գերդաստանի պատմութիւնն է կառուցում: Եւ պատմութիւնը տարածուած է ամբողջ վէպի երկայնքին, Արևմտահայաստանի շքեղ բնութեան մէջ ծուարած ամենամախնական պայմաններով և լի նախապաշարունակներով ու հարուստ ականդութիւններով լեռնային գիւղակի կեանքից մինչև թուրքական չարչարանքի բանտախուցերը, մինչև թուրք տղամարդու ամենայետին տիպարը՝ իր սեռային տարազան պիտոյթակներով:

Վիպական հերոսը՝ Թովմա Խատիսյանը, կարող էր ընտրել թուրքական ինքնութիւն, քանի որ կոտորածների տարին տարագրութեան ճամբին էր ծնուել ու թուրք ընտանիքում էր մեծացել, կամ զուիցերականը, քանի որ կեանքի մեծ մասը այնտեղ էր ապրել: Բայց նա ընտրում է ամենադժուարինը՝ Հայոց ցեղասպանութեան վերապրողի ինքնութիւնը: Ու իր ամբողջ հասուն կեանքում հարց ու փորձ անելով, պրպտելով ու կարդալով, իր ընտանիքի պատմութիւնն է վերակազմում, թէկուզ երևակայական: Եւ հպարտ է. «Ես իմ ընտանիքի հարազատ պատմութիւնը ունեի, ես գիտեի իմ

արմատները, ես նորից հայր ու մայր ունեի և շատ ազգականներ. ես նորից անուն ունեի, որ ականդութիւն ունէր իր ետին, մի բան, որ կարող էի իմ զաւակներին փոխանցել»: Եւ հիմա Խատիսեանը պատրաստ է մեռնելու: Տառապանքով լի իր կեանքի վերջին հասած, նրա մտածումները, ինչպէս Ցեղասպանութիւնը՝ վերապրած բոլոր մարդկանց վերջին մտածումները, յետ են թռչում, դէպի Արարատ, դէպի Հայաստան: Գուցէ և նրանց մտածումները երբեք չէին թողել այդ վայրերը: Իսկ այդտեղ մեռած հայերը շշմջում են գիշերով. «ու երբ հայերը շշմջում են, թուրքերը մղծափանջ են ապրում»: Երազում է ամեն մի հայ, «երազում է Անահիտին, մայր Հայաստանին, որ իր կորած որդուն՝ Հայկին է գտնում (Թովմայի անունը վերջում փոխվում է Հայկի, հեղինակն ասում է՝ ի յիշատակ «առաջին հայի»): Եվ Հայկը շատ զաւակներ է ունենում, և Հայկի զաւակներն ու զաւակների զաւակները բնակեցնում են երկիրը, որ «իրենցն էր և միշտ էլ իրենցը պիտի լինէր»: Վերջապէս, Խատիսեանի վերջին մտածումը, ինչպէս վերջին մտածումը բոլոր վերապրողների, նախքան վերջին շունչը փչելը, «կը թռչի յետ» կերթայ լրացնելու բացը թուրքական պատմութեան գրքերում»:

Այսպիսով, վստահութեամբ կարելի է հաստատել, որ ամերիկահայ անգլիագիր գրականութեան մէջ, մանաւանդ վերջին տասնամեակում, զգալի են Ցեղասպանութեանը հակազդելու նոր ուղղութիւնները, որոնք պիտի փոխանցուեն նաև Հայաստան: Հայաստանում ստեղծագործող գրողն ու բանաստեղծը գրական որևէ թեմա ընտրելու և իր ուզած կերպով զարգացնելու բացարձակ ազատութիւնն ունի այսօր: Առայժմ, այդ ազատութեան պայմաններում, զարգանում են դարձեալ նախապէս արգիլուած այլ թեմաներ, մանաւանդ կենցաղային ու սեռային հարցերի շատ իրապաշտ պատկերացում: Հաւատում են, որ Սփիւռք-Հայրենիք կամ մութը այս իմաստով էլ կը գործի: Միանգամայն կը չքանայ «Ցեղասպանութեան մասին գրելը մագոխիզմ է» մտածելակերպը, որ, իմ կարծիքով, թուրքական ու խորհրդային միացեալ պատուաստում էր խորհրդահայ ուղեղում: Դրանից միայն մեր թշնամիները շահեցին: Դա միայն մի յաւելեալ գործօն դարձաւ Սփիւռքն ու Հայրենիքը մտայնութեամբ իրարուց հեռացնելու: Այդ մտայնութիւնը Հայաստանում արդէն կորցնում է իր հիմքը, չնայած դեռ կան մարդիկ, և՛ պատասխանատու դիրքերում, որոնց կարծիքով Ցեղասպանութիւնը Սփիւռքի մտահոգութիւնն է ու դատը: Բայց այդ մտայնութիւնը երբեք այդքան խորը չի արմատաւորուել հայաստանեան մտաւորականութեան մէջ, ազգային ընտրանիի մէջ, որ տարել է ու տանում է ազգային գաղափարաբանութեան երեկուայ խաչը, այսօրուայ դրօշը, որի վրա քանդակուած՝ հայոց պահանջատիրութիւնը: Ցեղասպանութեան կամ վերջին հաշուով՝ հայոց պահանջատիրութեան թեմայով Սփիւռքի ու Հայաստանի գրողների ու բանաստեղծների ստեղծագործութիւնների ընդմիջեն է, որ հայ սերունդները պիտի ճանաչեն իրենք իրենց, պիտի մղուեն Հայ Դատի արդար լուծման պայքարին: Այդ պայքարի տաք քուրանքում է, որ պիտի կոփուի նոր հայը՝ մէկ ազգ ու մէկ հայրենիք գաղափարի դրօշը ձեռքին:

Գարուն. ապրիլ 2001